

<http://www.report.am/news/economy/verakangnviox-energian.html>

Վերականգնվող էներգետիկայի համար ռեսուրսներ ունենք, բայց... 13:21 29/06/2011

Վերականգնվող էներգետիկայի իրավիճակը եւ հեռանկարները Հայաստանում թեմայի շուրջ այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ խոսեցին Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի տնօրեն Թամարա Բաբայանը եւ հիմնադրամի վերականգնվող էներգետիկայի ծրագրի համակարգող Արայիկ Մարջանյանը:

Թամարա Բաբայանի փոխանցմամբ, վերականգնվող էներգետիկայի տեսանկյունից Հայաստանը տարածաշրջանի երկրների հետ համեմատ բավականին լավ վիճակում է, ինչին նպաստում է ստեղծված բարենպաստ օրենսդրական դաշտը: Ու թեեւ կարող ենք ասել, որ վերականգնվող էներգետիկայի համար հարուստ ենք մեծ ներուժով, սակայն ոլորտում անելիքներ դեռ շատ կան:

"Մինչեւ վերջերս Հայաստանը տարածաշրջանում բացարձակ առաջատար էր: Ներկայում որոշ առումներով մի փոքր զիջում ենք Թուրքիային: Սակայն փոքր ՀԷԿ-երի առումով առաջատար ենք"- հավելեց Արայիկ Մարջանյանը: